ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԲԵՐԴԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՆՈՐՇԵՆ, ԾՈՎԱՏԵՂ, ՍՈՍ, ՎԱՐԱՆԴԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱԿՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 3-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 59-րդ և 135-րդ հոդվածներով՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշենի համայնքի ղեկավարի, Նորշեն, Ծովատեղ, Սոս, Վարանդա համայնքների ավագանու անդամների և Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքի ավագանու անդամների 2022 թվականի ապրիլի 10-ի արտահերթ ընտրությունների քվեաթերթիկները ունեն սպիտակ գույն (նմուշները կցվում են).

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2022 թվականի մարտի 31
ք.Ստեփանակերտ